

չինուած ժայռոտ բլուրի մը գագաթը, որուն ստորտը կը դըտնուէի, ճանապարհին մօտիկ, առատահոս ազբիւր մը՝ որուն վրայ կառուցուած է մզկիթ մը:

Բայց Էլ-Պիրէհ պատմական աւելի մեծ հռչակ մը ստացած է ա՛յն աւանդութեան համաձայն, թէ ան եղած է այն տեղը, ուր Ս. Կոյսը կը կարծէր թէ Յիսուս Մանուկը, Չատկի տօնը Երուսաղէմի մէջ կատարելէ յետոյ, ուրիշ ուղեկիցներուն հետ մեկնած էր. հո՛ն ծանօթներուն և դրացիներուն մէջ փնտռուեցու ան, բայց չգտնուելով՝ իր ծնողք դարձան Երուսաղէմ (Ղկս. Բ. 42-51): Էլ-Պիրէհ առաջին կայանն էր Երուսաղէմի մօտիկ. Չատկի առթիւ ուխտի եկող Հրէայք հո՛ն կը հաւաքուէին և կը միանային խմբովին ճամբորդելու համար. հո՛ն կար նաև իջևան մը, Սամարիա և Գալիլիա մեկնողներուն համար: Դ. դարուն քրիստոնեայ ջերմեռանդութիւնը հաւանաբար եկեղեցի մը հիմնած էր հոն, յանուն Տիրամօր Ս. Կուսին, մշտնջենաւորելու համար աւետարանական այդ գրուագը: Ըստ Յերոնիմօսի, Հեղինէ թագուհին է նոյն եկեղեցոյ առաջին հիմնադիրը:

2. Էլ-Պիրէհ Խաչակրաց ժամանակ.

Ս. Գերեզմանի լատին Յիշատակագիրքէն կ'իմացուի թէ Առաջին Խաչակրաց առաջնորդը Կոտըֆրօայ աը Պուելյիոն Երուսաղէմի գրաւումէն յետոյ, Ս. Գերեզմանի սեպհականութեան համար 21 գիւղեր շնորհած էր. Էլ-Պիրէհ այդ գիւղերէն մին էր, որուն հետ կային մերձակայ Էլ-Րամ, Քալանտրէ, Պէյթ-Լիճճէ և Սուպիէ գիւղերը, Ռամալլահի արևմտեան կողմը: Յիշատակագիրք Էլ-Պիրէհը կը կոչեն Պերրա կամ լատիներէն Mahomerie = Առաջին Խաչակրութեան տարիներուն, հոս կը բնակէին քաղքեանի ազնուականներ, գլխաւորաբար Ֆռանկներ, ինչպէս ցոյց կուտայ մեզ Ս. Գերեզմանի Յիշատակագրոց 131 թիւը: Այս քաղաքացիները ունէին երգուեալներու ատեան մը, ուր երբեմն կը գումարուէին բոլոր անդամներով. անոնք հնազանդութիւն և հաւատարմութիւն կ'երգնուին ո՛չ թէ իշխանի մը կամ կոմսի մը, այլ կ'ուխտէին հաւատարիմ մնալ Ս. Գերեզմանի վանքին, որուն ներկայացուցիչն էր մասալարաւ մը, որ կ'ապրէր Էլ-Պիրէհի ժողովրդապետին եւ պաշտօնէութեան հետ. անոնք ամէնքն աը